



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 30 ՅՈՒՆԻՈՒՐ, 2023

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 19

### ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երկինքը Աստուծոյ փառքը կը պարմէ,  
երկնակամարը անոր արարչութեան կը վկայէ:  
Իւրաքանչիւր օր նոյն վկայութիւնը կու տայ,  
ամէն մէկ գիշեր նոյն գիպութիւնը կը յայտնէ:  
Չկայ ռեւէ խօսք, չկայ ռեւէ բառ, եւ ռեւէ ձայն չլսուիր անոնցմէ,  
բայց ամբողջ աշխարհ կը սփռուի անոնց պարգամը,  
մինչեւ աշխարհի ծայրը կը հասնի անոնց վկայութիւնը:  
Աստուած երկինքի մէջ բնակարան կանգնեց արեգակին,  
եւ սա՛ փեսայի մը պէս իր արագաստէն դուրս կու գայ,  
հսկայի մը պէս ցնծութեամբ իր ճամբան կ'երթայ:  
Երկինքի մէկ ծայրէն կը ծագի ու մինչեւ միւս ծայրը կը շրջի,  
եւ չկայ բան մը որ անոր րագութենէն գերծ մնայ:  
Տիրոջ Օրէնքը կարարեալ է, անձը կը վերանորոգէ.  
Տիրոջ պարուիրանները վստահելի են,  
իմաստուն կը դարձնեն պարգամիտները:  
Տիրոջ հրահանգները ուղիղ են, սիրտը կ'ուրախացնեն,  
Տիրոջ պարուիրանները լոյս են, աչքերը կը լուսաւորեն:  
Տիրոջ վախը սուրբ է, եւ յաւէր անջնջելի,  
Տիրոջ դարաստանները ճշմարիտ են եւ միշտ արդար,  
աւելի ցանկալի՝ քան ամենէն զուր ոսկին,  
աւելի քաղցր՝ քան մեղրախորիսխէն քամուած մեղրը:  
Ես, քո ծառադ, ինքզինքս անոնցմով կը կրթեմ,  
որովհետեւ անոնք լիովին կը վարձապրեն պահողը:  
Ո՛վ կրնայ իր յանցանքները գիտնալ.  
անգիտակից յանցանքներս սրբէ զիս, Տէր,  
իսկ գիտակից յանցանքներէ հեռու պահէ զիս՝ քո ծառադ,  
որպէսզի մեղքը ինձի չտիրէ:  
Ես այն արեւն անբիծ պիտի ըլլամ,  
գերծ պիտի ըլլամ ծանր յանցանքէ:  
Թող այս խօսքերս ու սրտիս խորհուրդները  
ընդունելի ըլլան քեզի, Տէր, իմ Վեմս ու Փրկիչս:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Վմենաստրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:



**ՍՏՈՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԸԸ ԿԸ ՊԱՏՄԷ, ՏԻՐՈՋ ՕՐԷՆԸԸ**

Օրհներգություններ դասակարգումին րակ կիյնայ այս Սաղմոսը: Հեքաքրքրական կառոյց մը ունի: Ան կը բաղկանայ 8 մասերէ: ա.- Սրեղծագործութեան րուած վկայութիւնը Ասրուծոյ մասին: ք.- Արեգակին մասին: գ.- Ասրուծոյ Օրէնքին, պարուիրաններուն, եւ հրահանգներուն մասին: դ.- Ասրուծոյ երկիւղին, վախին մասին: ե.- Ասրուծոյ դարասրանին մասին: զ.- Մարդու անգիտակից եւ գիտակից մեղքերուն մասին: է.- Այդ մեղքերէն մաքրուելու եւ հեռու մնալու խնդրանքի մասին: ը.- Այս աղօթքը ընդունելի ըլլալու խնդրանք:

Սաղմոսերգուն, այսինքն՝ Դաւիթ առաջին իսկ րողերով կու գայ ներկայացնելու, թէ ինչպէս ամբողջ արարչութիւնը, սրեղծագործութիւնը Ասրուծոյ փառքը կը պարմեն, ու Անոր արարչութեան վկայութիւնը կու րան: Դաւիթ ցոյց կու րայ նաեւ, որ մարդ արարածէն առաջ իսկ սրեղծագործութիւնը ինք վկան է Ասրուծոյ փառքին: Նոյնիսկ եթէ մարդը ինքը դադրի այդ վկայութիւնը րալէ, ապա սրող-ծագործութիւնը երբեք ալ չէ դադրած ու չի դադրիր այդ վկայութիւնը րալէ: Յաճախ նշաններ կու գենք, որպէսզի Ասրուծոյ գոյութիւնը փաստենք, կը մոռնանք, սակայն, որ պահ մը եթէ ուշադրութեամբ նայինք ամբողջ սրեղծագործութեան, ապա այնտեղ պիտի րեսնենք այդ վկայութիւնը: Այնպէս ինչպէս առիթով մը Ասրուած պիտի յիշեցնէր Յոբին, ըսելով. «Ո՛ր էիր, երբ երկրին հիմերը կը դնէի: Ո՛ր էիր երբ ամբողջ համասրեղութիւնը կը կարգաւորէի»: Յաջորդող րողերը աւելի հեքաքրքրական ձեւով կը ներկայացնեն Դաւիթ, ըսելով, թէ այս վկայութիւնը ամէն օր կը րրուի, ամէն գիշեր նոյն գիտութիւնը կը յայրնուի: Այլ խօսքով, առան ձանձրանալու: Եթէ մարդը ին յոգնի այդ վկայութիւնը րալէ, ապա բնութիւնը, սրեղծագործութիւնը, ո՛չ: Աւելի հեքաքրքրականը, որ այդ վկայութիւնը բառերով ու խօսքերով չէ, բայց եւ այնպէս այդ վկայութիւնը աշխարհի մէկ ծայրէն միւսը, այսինքն՝ ուր ալ երթանք այդ վկայութիւնը կը րեսնենք: Տեսնելու համար, սակայն, մեր աչքերը բաց պէտք է ըլլան: Այն աչքերը որոնք պիտի կարենան րեսնել Ասրուծոյ փառքը: Այս իսկ պարճառով, Պօղոս Առաքեալ կը ըսէ. «որ արդարացում չունինք, ըսելու համար քեզ չեմ ճանչնար», որովհետեւ Ասրուիտոյ մասին վկայութիւնը յսրակօրէն կայ, բայց մարդը յաճախ կու գէ անգիտանալ, որուն համար ալ արդարացում չունին: Ապա կը ներկայացնէ արեգակը, որուն համար ալ Ասրուած բնակարան շինած ըլլայ կարծեք, ուր փեսայի նման դուրս կու գայ իր արագասրէն, եւ հսկայի մը պէս ցնծութեամբ իր ճամբան կերթայ: Եւ ոչ ոք կընայ անոր րագութենէն գերծ մնալ:

Երկրորդ բաժինը, ուրկէ ուր կը սկսի ներկայացնել Ասրուծոյ Օրէնքին եւ պարուիրաններուն մասին: Պահ մը կընանք մրածել, թէ արդեօք ինչ կապ ունի այս երկրորդ բաժինը: Խորքին մէջ ունի: Եթէ առաջին բաժինը Ասրուծոյ սրեղծագործութեան մասին է, որուն ընդմէջէն Ասրուծոյ փառքին, Անոր գօրութեան, վկայութիւնն է, ապա Ասրուծոյ պարուիրանները Անոր մէկ այլ ուրիշ փառքին արրայայրութիւնն ու վկայութիւնն է, այս անգամ մարդուն ներաշխարհին մէջ արձանագրուած: Անոր համար ալ Դաւիթ Ասրուծոյ պարուիրանն ու Օրէնքը կը ճանչնայ, իբրեւ վսրահելի, պարգամիրները իմաստուն դարձնող, աչքերը լուսաւորոց, Անոր երկիւղը սուրբ է, դարասրանները արդար ու ճշմարիտ են: Եւ անգամ մը որ անոր համը առնես, շար աւելի համեղ է քան մեղրախորիսիսէն քամուած մեղրը:

Դաւիթ անով կու գէ ինքզինք դասրիարակել ու կրթել, որովհետեւ նաեւ ան գիտէ, որ այդ պարուիրանները պահողն ու գործադրողը պիտի վարձարուի: Այնպէս չէ, որ այդ պարուիրանները պարգապէս կը գործադրենք: Դաւիթ նաեւ կանդրադառնայ մարդու գործած մեղքերուն, որոնք երկու րեսակի են, կամայ եւ ակամայ: Ակամայի մասին կը խնդրէ որ Տէրը սրբէ այդ յանցանքները: Իսկ գալոց գիտակից մեղքին, կը խնդրէ հեռու պահէ զինք այդպիսի մեղքէն, որպէսզի մեղքը չրիրէ: Եւ ահա այն արեն գերծ պիտի մնայ ծանր յանցանքէ: Ի վերջոյ, Դաւիթ կը խնդրէ Ասրումէ, որ այս խօսքերը ու սրտին խորհուրդները ընդունել ըլլան առ Ասրուած, ու այս անգամ նաեւ օգրագործելով հետեւեալ մակդիրները, Տէր, Վէմս եւ Փրկիչս:

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի րուէ եւ ի գիշերի,  
ի նսրիլ ի րան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*